

ՆԱՄԱԿ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Բժիշկներու դեղերու արմատները մարմնի ցաւերը կ'առողջացնեն, իսկ ապաշխարութեան արտասուբի հեղումը հոգիներու մեղքի վերքերը կը բուժէ, մանաւանդ անոնց, որ կ'ապաշխարեն աղատներու ողորմութիւն եւ գթութիւն ընելով: Բագմաթիւ արմատներ կան, որոնք կը դադրեցնեն հիւանդութիւնները եւ որոնք խառնուած են բժիշկներու դեղերուն հետ, բայց կայ նաեւ արմատ մը, որ աւելի ազդեցիկ է ցաւերու փարատման համար: Հիւանդութեան վերաբերող դեղերուն նման, նաեւ հոգին մեղքերէ մաքրելու համար կան ապաշխարութեան բագմաթիւ ձեւեր, բայց մեղքերէն մաքրուելու եւ վերքերէն դարմանուելու համար առաջնութիւններու մէջ ամէնէն կարեւորը եւ ամէնէն ազդեցիկը ողորմութիւնն է, մանաւանդ երբ անոր կ'ընկերակցի ողորդ, հառաչանքը եւ գթառատ արտասուբը: Զգուշանանք այս բոլորին համար եւ վաղուրնէ սկսեալ մեր մեղքերուն համար ապաշխարենք եւ մեր հարստութեամբ ողորմութիւն ընենք առանց վերջին օրուան սպասելու: Որովհետեւ գոդ է այդ օրը: Վերջին օրը յափշտակող է: Այս աշխարհէն մեր ելքը անյայտ է: Յանկարծ կու գայ, արգելք կը հանդիսանայ եւ թոյլ չի տար, որ աղօթես, աղերսես, լաս, ողբաս, ողորմութիւն ընես եւ ապաշխարես: Այդ օրը թակարդի մը նման կը բռնէ քեզ եւ առիւծի մը նման կը յափշտակէ: Անգութ է ինչպէս գերեզմարողը՝ գերիի մը նկատմամբ: Կը հառաչես արտասուելով եւ ողբալով, սակայն անօգուտ է:

ՃԱՌԵՐ

ՅՈՎՀԱՆ ՄՍՆԴԱԿՈՒՆԻ ՀԱՅՐԱՊԵՏ

ՊԱՆԱԿԷ



Եպիսկոպոսական պատուանշան մըն է պանակէն, որ մասնաւոր շղթայով վիզէն կը կախուի:

Յետ եպիսկոպոսական ձեռնադրութեան եւ օծման, վեհարանին մէջ Վեհափառ հայրապետը «Պանակէ»-ով օրհնելէ ետք նորընծայ եպիսկոպոսները, անոնց իւրաքանչիւրին վիզէն պանակէ մը կը կախէ:

Պանակէ անունը յունական բանակիւն է, որ կը նշանակէ Ամենասուրբը՝ Աստուածամայրը:

Մենք հայերէնով սովոր ենք կոչել պանակէ, որ ձուածն կամ կլոր կ'ըլլայ եւ Աստուածամօր նկարը կ'ունենայ:

Պանակէն թագ մը կը կրէ, որուն ետին օղակէն կախուած կ'անցնի շրդթան: Լանջախաչին նման ստորոտին ականակուռ գարդ մը կախուած կ'ըլլայ:

Ձ Պանակէներ կան, որոնք Քրիստոսի նկարը կը կրեն եւ կամ տէրունի այլ նկարներ:

Շարունակելի



ԲՈՒ ԽՍՐԷՂ ԽՆ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՆ ԸՄԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2022

ԹԻՒ 37

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 49.13-23: Գղ. 6.14-18: Յհ. 3.13-21

ՏՕՆ ՎԵՐԱՅՄԱՆ ՍՐԲՈՅ ԽԱԶԻՆ

Ոչ ոք երկինք ելաւ բացի մարդու Որդիէն, որ իջաւ երկինքէն՝ ուր կը գտնուէր: Եւ ինչպէս, որ Մովսէս պղնձեայ օձը բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ պէտք է մարդու Որդին բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յախտեցական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չմեռնի, այլ՝ յախտեցական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ դրկեց, ո՛չ թէ որպէսզի Որդին աշխարհը դատապարտէ, այլ՝ որպէսզի աշխարհը փրկէ: Ով, որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, իսկ ով, որ չի հաւատար անոր, արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին չհաւատալուն համար: Եւ դատապարտութիւնը այս է: Հակառակ անոր, որ լոյսը աշխարհ եկաւ, մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով որ չար գործ կատարէ, կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին: Սակայն ով, որ կատարէ ինչ որ ճշմարիտ է՝ լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ, թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են:

Կեանքի ճամբան դժուար է

«Դէպի կեանք տանող դուռը նեղ է եւ ճամբան դժուար, եւ քիչեր միայն կը գտնեն զայն» (Մտ. 7.14): Քրիստոս ինքն է դուռը (ՅՀ. 10.7) եւ ինքն է ճամբան (ՅՀ. 14.6): Քիչ են հետեւորդները Քրիստոսի, որովհետեւ մարդիկ չեն ուզեր հանդիպիլ նեղ դռներու եւ դժուարին ճամբաներու: Մարդ արարածը աւելի հակամէտ է լայն դռներէ եւ դիւրին ճամբաներէ երթալ: «Դուռը նեղ է», որովհետեւ անիկա կը բացուի յարատեւ աղօթքով միայն: «Ճամբան դժուարին է», որովհետեւ անիկա Քրիստոսի ճամբան է, Գեթսեմանիի ճամբան է, խաչակրութեան ճամբան է: Մարդիկ կ'ուզեն արքայութեան հասնիլ՝ առանց Արքային տուած խաչը կրելու կ'ուզեն թագաւորել՝ առանց թագաւորին տուած լուծը ընդունելու (Մտ. 11.29):

ԽԱՉՎԵՐԱՑ



Ամեն տարի, Սեպտեմբեր 11-ի եւ 17-ի միջեւ գուգադիպող Կիրակի օրը, Հայաստանեայց եկեղեցին կը յիշատակէ իր հինգ տաղաւարներէն մէկը՝ Խաչվերացը: Ինչպէս անունը կը պարզէ, Խաչվերացը հայ ժողովուրդին սիրելի խորհրդանիշ դարձած խաչի նուիրուած տօներէն մէկն է:

Խաչի նուիրուած Խաչվերացի տօնը՝ Խաչը փառաբանելու, Խաչը հպարտութեամբ վեր բարձրացնելու տօն մըն է: Այս տօնը հիմնուած է պատմական յատակ եղելութեան մը վրայ, որ տեղի ունեցած է Քրիստոնէութեան սկիզբնական տարիներուն: Պատուական դրուագը հետեւեալն է. Պարսիկները Երուսաղէմը աւերելէ ետք, Քրիստոսի խաչը կը փախցնեն: Հերակլ կայսրը իր կարգին կ'արշաւէ Պարսկաստան եւ կը վերատիրանայ Սուրբ Խաչին: Զայն վերցնելով կը վերադառնայ Կ. Պոլիս եւ ժողովուրդին առջեւ հպարտութեամբ բարձրացնելով մուտք կը գործէ քաղաք:

Խաչը վեր առնելու այս առաջին եղելութիւնը կը վերագրուի Երուսաղէմի առաջին եպիսկոպոս Յակոբ Առաքելին, որ ժողովուրդին դիմաց խաչը վեր առնելով օրհնեց զանոնք ըսելով. «Խաչի քո, Քրիստոս, երկիրպագանեմք», այսինքն՝ «Քրիստոս, Խաչիդ առջեւ կը ծնրադրենք ու կ'երկրպագենք»:

Խաչվերացի օրը Հայաստանեայց եկեղեցիէն ներս կը կատարուի թափօր եւ Անդաստան, որուն ընթացքին օրհնութիւն եւ փառք կը տրուի Աստուծոյ իր տուած բարիքներուն եւ առատաձեռնութեան համար եւ յատուկ աղօթքներով կ'օրհնուին աշխարհի չորս ծագերը:

ՀԱՐՅՈՒՄ-ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Կրնա՞ք մեզի բացատրել հայկական Խաչի ծելին մասին

Այո: Հայկական Խաչը միշտ դատարկ կը ներկայացուի եւ անոր վրայ չենք հանդիպիր խաչուած Քրիստոսին: Ինչո՞ւ: Որովհետեւ այդպիսով մարդիկ ուզած են խորհրդանշել Քրիստոսի յաղթանակը մահուան առջեւ:

Հայկական խաչերը երբեմն կը ներկայացուին զարդարուած, խաղաղ, տերեւներով եւ ցորենի հասկերով: Ասոնք կը խորհրդանշեն կեանքը՝ որ ծնունդ կ'առնէ խաչէն, որ այլապէս մահուան ծառայող գործիք մըն էր:

Հ Ո Գ Ե Ւ Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ԱՍՏՈՒՄԾ Է ՀԻՒՆՍԳՆԵՐԸ ԲԺՇԿՈՂԸ

Երկու հաստատումներ եւս:

1) Երբ Յիսուս երկրորդ անգամ ըլլալով դպաւ կոյրին աչքերուն, ան սկսաւ ամէն ինչ յստակ տեսնել: Նկատելի է սակայն, որ առաջին անգամ Յիսուս թուքով թրջեց անոր աչքերը եւ ապա ձեռքով դպաւ աչքերուն, իսկ երկրորդ անգամ, թուք չգործածեց, այլ՝ պարզապէս ձեռքերը դրաւ աչքերուն վրայ, սորվեցնելու համար իրեն եւ մեզի, թէ թուքը չէր, որ զինք բուժեց, այլ՝ իր ձեռքին բժշկարար հպումը:

2) Երբ Յիսուս տեսաւ, որ կոյրին աչքերը առաջին հպումով չբացուեցան, երկրորդ անգամ դարձեալ դպաւ աչքերուն, որպէսզի յիշեցնէ մեզի, թէ երբ ինք գործ մը սկսի, զայն իր աւարտին կը հասցնէ յաջողութեամբ, եւ կը սորվեցնէ մեզի նոյնը ընել:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ւ Ո Ր Դ Ա Ս Ը

1) Ինչպէս Յիսուս թուք գործածեց բայց բուժումը իրմէ էր, այնպէս ալ բժիշկները դեղ կը գործածեն, բայց բուժումը Աստուած է որ կու տայ:

2) Երբ գործի մը ձեռնարկենք եւ շուտով արդիւնք չբաղենք կամ արգելքներու հանդիպինք՝ չուսահատինք, այլ՝ յարատեւենք գործի մէջ:

ԵՅԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

ԵՅԷ ԱՆԲԱՎՈՒՄԸ ԵՍ ԱՐԿԱՐՈՒԹԻՄՆ ԿԸ ՓՆՏՈՒՄ, ԿԱՐԿԱ՛Վ՝ ՍԱՂՄՈՍ 35

Դէ՛մ դիր, ո՛վ Տէր, անոնց՝ որոնք ինծի կ'ըդիմանան: Կոու՛է՛ հետը անոնց՝ որոնք ինծի դէ՛մ կը կոուին: Առ գրահդ եւ ասպարդ եւ փութա՛, օգնէ՛ ինծի: Վերցո՛ւր նիգալդ եւ տապարդ՝ զիս հալածողներուն դէ՛մ, եւ վստահեցո՛ւր զիս, ըսելով. «Քու փրկութիւնդ ես եմ» Թող ամօթով մնան ու խայտառակուին անոնք, որ ինծի չարիք կը նիւթեն: Տիրոջ հրեշտակը թող փախուստի մատնէ զանոնք, ինչպէս յարդը՝ հովէն քշուած: Անոնց նամբան խաւա՛ր ու սայթափուն թող ըլլայ, երբ Տիրոջ հրեշտակը հալածէ զիրենք, որովհետեւ՝ առանց պատճառի ինծի համար թակարդ լարեցին, առանց պատճառի փոս փորեցին ինծի համար: Անսպասելիօրէն թող կորուստի մատնուին, իրենց լարած թակարդին մէջ թող, որ իրե՛նք բռնուին, իրե՛նք իյնան իրենց բացած փոսին մէջ ու կորսուին: Բայց ես Տիրոջ պիտի ցնծամ, իր պարգեւած փրկութեամբ պիտի հրճուիմ: Ողջ էու՛թիւնս պիտի գոչէ. «Չկա՛յ մէկը քեզի նման Տէր, որ աղքատը կը փրկէ հօգորին ձեռքէն, աղքատն ու չճաւորը կը փրկէ անոնցմէ՛ որոնք կեղեքեն զայն: Չարամիտ մարդիկ ինծի դէ՛մ վկայութիւն կու տան, կը հարցնեն բաներ՝ որ ես չեմ գիտեր: Բարիքներուս փոխարէն չարիք կը հատուցանեն, ամէն ուրախութիւն իլելով ինծմէ՛:

Փառք Հօրը Որդիին եւ Սուրբ Հոգիին յաւիտեանս յաւիտենից. Ամէն: ՍԱՂՄՈՍԱԳՐԻԷՆ